

**Սպորտի մասսայականացման ուղղությամբ տարվող աշխատանքները մեծ թափով շարունակվելու են նաև 2017 թվականին**

«Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն իր գործունեության այս փուլում նախաձեռնել և իրականացնում է մասսայական սպորտի և առողջ ապրելակերպի զարգացման և ոլորտի առավել ակտիվացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր՝ համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի:

2016 թվականի հոկտեմբեր ամսից անցկացվել են «Կյանքը՝ սպորտի ու ռիթմով» մասսայական ամենշաբաթյա անվճար մարզումները: Յուրաքանչյուր մարզմանը միջին հաշվով մասնակցել է 100 մարզվող: Մարզումներն անցկացվել են Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի հարակից տարածքում, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնին հարակից այգում և «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության «Սպարտակ» մարզադահլիճում:

Ոլորտի զարգացման և մասսայական սպորտի գաղափարների արմատավորման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման վերաբերյալ ազգային ծրագրի մշակման նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ, մշակման փուլում են նաև բակային սպորտի զարգացման, սպորտային տուրիզմի զարգացման, հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգերի նախագծերի մշակման աշխատանքները:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ավանդաբար կազմակերպում է ՀՀ Նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական նախադարձական հաստատություն», «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ», «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» ամենամյա մրցույթները, ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական ամենամյա մարզական փառատոնը, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը:

Նախարարության կողմից մեծ ուշադրություն է դարձվում հաշմանդամային սպորտին, որի շրջանակներում տարբեր ծրագրերով իրականացվել է շուրջ 12 միջոցառում: Մասնակիցները տեսողական, լսողական, հենաշարժողական ապարատի և մտավոր խնդիրներ ունեցող անձինք են:

ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին 2016 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից իրականացված մասսայական սպորտի զարգացմանն ուղղված ծրագրերին ընդհանուր առմամբ մասնակցել է 61.500 մարդ:

Բացի պետական միջոցներով կազմակերպվող միջոցառումներից՝ իրականացվել են նաև ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի սաների համար, ինչպես նաև ««Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության սաների համար:

Նախարարություն կողմից մարզական-մասսայական միջոցառումներ են կազմակերպվել նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում դատապարտյալ կանանց համար: Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի առթիվ 2016 թ. սեպտեմբերի 19-ին Նելսոն Ստեփանյանի անվան N° 71 դպրոցի 5-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը:

Ի թիվս սպորտի մասսայականացման և ֆիզիկական կուլտուրայի քարոզչության ուղղությամբ նախարարության կողմից արդեն իսկ իրականացվող ծրագրերի՝ մշակվել և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամաններով հաստատվել են ևս 6 նոր ծրագրերի կանոնակարգեր՝ ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադան, հանրապետական ուսանողական մարզական խաղերը, ՀՀ գյուղական մարզական խաղերը, տարեցների հանրապետական խաղերը և պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթը: Նշենք, որ վերջինս անցկացվեց 2017 թ. փետրվարի 23-ից 24-ը և բավական լավ արձագանք ունեցավ: Հրաձգության հանրապետական մրցույթին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության բոլոր պետական մարմինների շուրջ 200 աշխատակիցներ: